ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 13 և 13/1,
հեռ. (+374 12) 22 22 22, ֆաքս(+374 10) 59 05 82
էլ. փոստ՝ ashb@ardshinbank.am
կայք՝ www.ardshinbank.am

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» Փակ Բաժնետիրական Ընկերության կողմից արժեկտրոնային պարտատոմսեր թողարկելու մասին Բանկի վարչության 2019 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 01/051-237 Լ որոշում: («ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ Վարչության որոշումը կցվում է):

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2019թ. սեպտեմբերի 19-ի թիվ 01/051-237 Լ

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 21[6] հոդվածը, «Արդշինբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) կանոնադրության, «Արդշինբանկ» ՓԲԸ Խորհրդի 2019թ մարտի 29-ի նիստի թիվ 04/19-01 Լ որոշման դրույթները, և ուսումնասիրելով Ծրագրային ազդագրի շրջանակում կորպորատիվ պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ Գլխավոր գանձապետ Արսեն Սարգսյանի առաջարկը՝ Բանկի վարչությունը.

ո ր ո շ ո ւ մ է՝

1. Հավանություն տալ Բանկի կողմից ՀՀ ԿԲ նախագահի 2019թ. մայիսի 17-ի Թիվ N 1/297Ա որոշմամբ գրանցված «Արդշինբանկ» ՓԲԸ անվանական արժեկտրոնային պարտատոմսերի ծրագրային ազդագրի շրջանակում 3-րդ սերիայի պարտատոմսերի թողարկման վերջնական պայմաններին՝ համաձայն կից ներկայացված Հավելված 1-ի (Կցվում է):
2. Գանձապետարան տնօրինությանը՝ ապահովել սույն որոշմամբ հավանության արժանացած վերջնական պայմանների շրջանակում պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման գործընթացի իրականացումը:
3. Վարչական հարցերով վարչությանը՝ ապահովել սույն որոշման ծանուցումը Բանկի վարչության անդամներին:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Գլխավոր գանձապետի վրա:
5. Սույն որոշումն ուժի մեջ է ծանուցման պահից:

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝ ԱՐՏԱԿ ԱՆԱՆՅԱՆ

Ստորագրվել է Վարչության նախագահ
կողմից 2019թ.սեպտեմբերի 19-ին, ք. Երևան

Վարչության պատասխանատու քարտուղար
Կ.Ստեփանյան